ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ/ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Դասին աշակերտների ներգրավվածության ապահովումը հարցադրումների միջոցով»

Անցկացման վայրը՝ Մարտունի

Հետազոտող ուսուցիչ՝ *Արևիկ Ավանեսյան*

Դպրոց՝ *Վարդենիսի N 3 հիմնական դպրոց ՊՈԱԿ*

Մենթոր՝ *Բեյբության Հասմիկ*

Այսօրվա կրթված մարդը ճշգրիտ հարցն արծարծել իմացողն է:

Այսօրվա կրթված մարդը նա է, ով կարողանում է հարցը ճշգրիտ ձևակերպել:

Էռնեստո Բոյեր

Վարդենիս 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....3

Գրական ակնարկ…….…….....5

Փորձարարական հետազոտություն…….....11

- Խմբի նկարագիրը.....12
- Փորձարարական դաս-1…….....13
- Փորձարարական դաս-2……..….15

Եզրակացություն…….....17

Գրականության ցանկ…….....…..19

Հավելված 1……..20

Հավելված 2……..22

Ներածություն

Ժամանակակից մանկավարժությունը ենթադրում է ուսումնառության բարդ գործընթաց, որն իրականացվում է կրթական տարբեր ոլորտներում՝ մանկապարտեզներից մինչև բարձրակարգ ուսումնական հաստատություններ, որտեղ յուրաքանչյուր անհատ պահանջ ունի կրթվելու, ուսուցանվելու և զարգանալու: Մանկավարժական տարբեր խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է ուսումնառության գործընթացը ենթարկել փոփոխության՝ երեխաների պահանջներից կախված, ժամանակին համաքայլ և տարբեր ռազմավարություններ ու մեթոդներ կիրառել:

Ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Այդ մեթոդներից է հարցադրումների մեթոդը:

Հարցադրումների մեթոդը պետք է դիտարկել որպես «հզորագույն զենք», որը կձևավորի հարցադրումներին պատասխանելու, ինքնուրույն հարցադրումներ կազմելու, կարևորն անկարևորից զանազանելու մշակույթ՝ ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցիչների մոտ: Հարցադրման մեթոդը հնարավորություն է տալիս ինքնուրույն հաղթահարել առարկայի բարդությունը: Իմ առաջնային խնդիրն է այսօր լուծել աշակերտի յուրացման գործընթացը, հասնել մի այնպիսի վերջնարդյունքի, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի մայրենիի նշանակությունը, կարևորությունը և կիրառելիությունը: Իմ մտադրությունն է փորձարկել մեթոդը հարցերի ձևով(փակ, բաց, մարտահրավերային), որ աշակերտը յուրաքանչյուր դասից հետո ավելի ու ավելի հասկանա առարկան, վստահելով իր ուժերին ձեռք բերի իմացական մակարդակ, որը համապատասխանի ժամանակակից գիտական և ուսումնական պահանջներին: Այդ նպատակով ես որպես հետազոտության թեմա ընտրել եմ հարցադրումների մեթոդը նոր նյութի յուրացման փուլում, որի իրագործումը արդիական է և ժամանակակից մանկավարժության պահանջներին համապատասխան:

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից մանկավարժության մեջ մեծ տեղ ունի հարցադրումների մեթոդը, այն հիմքն է հանդիսանում երկխոսությունների, բանավեճերի, հարցազրույցների: Հարցադրումները նպաստում են սովորողներին պարզաբանելու, բացատրելու, հիմնավորելու, մեկնաբանելու, համեմատելու, հակադրելու, համաձայնելու կամ ոչ, ամփոփելու, վերլուծելու և գնահատելու ունակությունների զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակը.

- ✓ ուսումնասիրել հարցադրման արդյունավետությունը դասապրոցեսում, և թե ինչպես է այն զարգացնում սովորողների վերլուծական հմտությունները
- ✓ կազմել հարցադրումներ Բլումի տաքսոնոմիայի համաձայն, ճիշտ իրականացնել հարցադրումներին հատկացվող ժամանակի բաշխումն ու վերահսկումը դասերին:

Հետազոտական աշխատանքի խնդիրները:

- Հարցադրումների հմտությունների զարգացումը
- Հարցադրումների միջոցով ձևավորել հարցեր տալու ու դրանց պատասխանելու մշակույթ
- Ինքնուրույն մտածելու ունակության ձևավորում
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում:

Գրական ակնարկ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուսուցման գործընթացը հեշտացնելու համար կիրառում են տարբեր մեթոդներ, ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս:

Ուսուցման մեթոդներ (հուն. μέθοδος_ ճանապարհ), փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ[1]: Ուսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը, այլ անհրաժեշտ է կիրառել մեթոդներ, որոնց շնորհիվ ուսանողը կամա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից:

Ուսուցման գործընթացը խթանելու արդյունավետ մեթոդներից է հարցադրումների մեթոդը, որը հնարավորություն է տալիս ապահովել մեծաթիվ սովորողների ներգրավածությունը դասին, ակտիվ մասնակցությունը, մտքերի ազատ արտահայտում, վերլուծում, խնդիրների լուծում, նոր նյութի ընկալում և վերլուծում: Այս գործընթացում սովորողը կարող է ձևավորել և զարգացնել խոսքը, հիշողությունը, մտածողությունը, ստեղծագործելու ունակությունը, կարևորել ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ, որից էլ զարգանում է ինքնուրույն աշխատելու հմտությունները: Հարցադրումների մեթոդը կիրառելի է դասի ցանկացած փուլում, քանի որ այն կարող է մոտիվացնել աշակերտներին և միաժամանակ դառնալ գործիք աշակերտների ուսումնառությունը հաջող իրագործելու համար: Դասի արդյունավետության ապահովումը նշանակալի չափով պայմանավորված է

[1] Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», Երևան, 2005 թ

հարցադրումներով: Հարցերը, որոնք տրվում են դասի ընթացքում, ունեն ուղղորդող և զարգացնող նպատակ, դրանք կարող են ակտիվացնել աշակերտին և հնարավորություն տալ մեկ դասի ժամանակ մեծ թվով աշակերտների ներգրավել: Ես ցանկանում եմ կիրառել հարցադրումների մեթոդը, քանի որ աշակերտների ուսումնառության գործընթացում այս մեթոդը արդյունավետ է, առաջընթացը դասից դաս տեսանելի է, սովորողների համար հեշտ է, հասանելի և մղում է դեպի յուրացում ու հասկացում: Վերլուծական հմտությունների զարգացումը իրականանում է լավ մշակված բաց հարցերի շնորհիվ, որոնք համապատասխանում են Բլումի տաքսոնոմիայի աստիճանակարգին:



Հարցադրումներն ունեն ուղղորդող բնույթ: Ճիշտ ձևակերպված հարցերը՝ պարզից բարդ, հասկանալիից անհասկանալի, մատչելիից անմատչելի, կարճ ու

ընդարձակ պատասխան ենթադրող, նպաստում են աշակերտների մտածելու, ինքնուրույն դատողություն կատարելու, անհրաժեշտ պատասխանները գտնելու կարողությունների ձևավորմանը: Ինձ համար կարևոր է ընտրել այնպիսի մի ռազմավարություն, որ աշակերտին մղի մտածել, վստահել սեփական ռեսուրսներին, ինքնուրույն գտնել նոր նյութի բովանդակային և գլխավոր խնդիրների լուծման ուղիները՝ հենվելով նախորդ դասերին ձեռք բերված գիտելիքների վրա, ուստի ես փորձեցի հարցադրումների մեթոդը կիրառել դասի այն փուլում, որը կոչվում է նոր նյութի յուրացում: Շատ կարևոր է, որ դասին ներգրավված աշակերտների թիվը հնարավորինս մեծ լինի, որպեսզի չլինեն դասից դուրս մնացած աշակերտներ, որոնք պասիվ դիրքորոշում ունեն: Անհրաժեշտ է՝ թյուրըմբռնող, չհասկացող կամ դասի մեջ չներգրավված աշակերտներին թիրախավորել, որովհետև իմ նպատակն է յուրաքանչյուր աշակերտի մոտ մեծացնել ինքնագիտակցական մոտեցումը և հետաքրքրությունները դասի նկատմամբ: Ըստ իս այս մեթոդը խթանում է աշակերտի ակտիվությունը. հարցերը շահագրիգիռ ազդեցություն են ունենում նրանց վրա և պատասխանները, թեկուզ ոչ ճիշտ, ունենում են խթանիչ ազդեցություն ուսումնառության գործընթացում: Իմ առաջնային խնդիրն է այսօր լուծել աշակերտի յուրացման գործընթացը, հասնել մի այնպիսի վերջնարդյունքի, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի առարկայի նշանակությունը, կարևորությունը և կիրառելիությունը: Իմ մտադրությունն է փորձարկել մեթոդը հարցերի ձևով (փակ, բաց, մարտահրավերային), որ աշակերտը յուրաքանչյուր դասից հետո ավելի ու ավելի հասկանա առարկան, վստահելով իր ուժերին ձեռք բերի իմացական մակարդակ, որը համապատասխանի ժամանակակից գիտական և ուսումնական պահանջներին: Այդ նպատակով ես որպես հետազոտության թեմա ընտրել եմ հարցադրումների մեթոդը նոր նյութի յուրացման փուլում, որի իրագործումը արդիական է և ժամանակակից մանկավարժության պահանջներին համապատասխան:

Այս մեթոդի ռամզավարական նշանակությունը կայանում է նրանում, որ սովորողների մտածողությունը խթանվում է նպատակուղղված հարցերի միջոցով և մեծանում է ինքնուրույն մտածելու, տրամաբանելու գործընթացը դասապրոցեսի ընթացքում: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու ռազմավարությունը դեռևս

վաղուց է կիրառվել ուսուցման ընթացքում (Սոկարատեսից սկսած):

Հարցադրումները պետք է առանցքային դեր ունենան կրթական գործընթացում, դրանք պետք է կարևոր կրթական գործիք հանդիսանան սովորողի մտածողությունը զարգացնելու, գիտելիքները կանոնակարգելու, համակարգելու և նոր նյութը յուրացնելու համար: Հարցրերը արդյունավետ կլինեն, եթե

- լինեն պլավորված
- լինեն փոխկապակցված
- ուղղվեն ողջ դասարանին
- պատասխանելու համար ժամանակ տրվեն
- չկրկնվեն
- խոսակցական ոճով տրվեն
- ընդարձակ պատասխաններ պահանջեն

Հարցադրումներ կատարելիս պետք է ուշադրությունը բաշխել ողջ դասարանին, հաշվի առնել նրանցում թյուրըմբռնող աշակերտներին, այս դեպքում հարցերը կարելի է տարբերակել, քանի որ ներգրավվածություն ապահովելու համար թյուրըմբռնող աշակերտների համար անհրաժեշտ է պարզ կամ հեշտ հարցեր կազմել և գնահատել: Հարցերը չպետք է լինի շատ երկար և ձանձրալի, անիմաստ, անորոշ և խառը:

Դրանք պետք է ուղղված լինեն մի որոշակի նպատակի, ունենան միտք, բովանդակություն, սահմանափակություն և հստակություն: Հարցադրումներ կատարելիս շատ հաճախ այն տրվում է խմբային աշխատանքներում կամ զույգերով քննարկումների ժամանակ, դա հնարավորություն է տալիս աշակերտներին միմյանց հետ շփվելու, մտքեր փոխանակելու, քննարկումներ կազմակերպելու և ի վերջո իրար օգնելու թեմայի յուրացումը, խնդրի լուծումը գտնելու համար:

Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների

ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա:

Ուսումնական գործընթացի կազմակերպման առումով շատ կարևոր է նաև հարցեր տալու հմտությունը: Կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնելը, այլև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից:

Հարցերը պետք է լինեն [2]

- հստակ
- նպատակաուղղված
- հակիրճ
- տեղին
- աշակերտների մակարդակին համապատասխան
- տրամաբանական հաջորդականությամբ
- մտածելու տեղիք տվող

ՈՒսուցիչը հարցերի միջոցով հասնում է նրան, որ սովորողը ինքնուրույն է հաղթահարում առարկայի բարդությունը, ձեռք է բերում գիտելիք, համադրում է իր նախնական գիտելիքների հետ, դրանք դարձնում է կիրառական, համակարգում է, կատարում է եզրահանգումներ՝ միացնելով մյուս սովորողների դատողությունները և ուսուցչի ուղղորդումները:

[2] /Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր»

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ[3]

ԲԱՑ Սովորաբար սկսվում են «ի՞նչ», «ինչպե՞ս» հարցերով: Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան:

ՓԱԿ արտահայտվում է մեկ բառով՝ պարզապես «այո» կամ «ոչ»:

ՀՈՒՇՈՂ «Չե՞ք կարծում արդյոք, որ...», «Մի՞թե դուք կարծում եք, որ...»

ԵՆԹԱՏԵՔՍՏՈՎ «Դուք համաձա՞յն եք, որ Y-ը ավելի հետաքրքիր է, քան X-ը, կամ դուք կսխալվեք, եթե ընտրեք Z տարբերակը»

ՀԵՏԱԴԱՐՁ Ճշգրտվում է նյութի ընկալումը, աշակերտների զրույցի մեջ ընդգրկված լինելը նրանց պատասխանները զարգացնելու կամ հետագա քննարկումը խրախուսելու և շարունակելու նպատակով

ՈՒՂՂՈՐԴՈՂ «Ի՞նչ նոր հասկացությունների հանդիպեցինք այս թեման ուսումնասիրելիս»:

Յուրաքանչյուր ուսուցիչ իր ողջ մանկավարժական գործունեության ընթացքում պետք է գիտակցի, որ ինքը հետազոտող է, որովհետև ամեն դաս և դասարան պահանջում է յուրահատուկ մոտեցում, ուշադրություն ու ստեղծագործական դասավանդում: Ամեն օր դասի ընթացքում, ուսուցիչը ճանաչում է սովորողների նոր հետաքրքրությունները, գիտելիքների փոփոխությունները, հոգեկան ներաշխարհի փոփոխությունները, նրանց կողմնորոշումները, առարկայական գիտելիքների ձեռքբերումները, վարքի դրսևորումները: Այդ փոփոխություններին հետևելով, ուսուցիչը կատարում է յուրաքանչյուր սովորողի նկատմամբ հետազոտություն և ձգտում է փոփոխել կամ արդյունավետ դարձնել նրա ուսումնառությունը՝ ընտրելով նոր ռազմավարություններ ու մեթոդներ:

Խորհուրդ է տրվում բոլոր ուսուցիչներին.

- Վստա՛հ եղեք, որ հարցը հասկացվել է:
- Հարցը ձևակերպե՛ք հակիրճ:
- Կշռադատե՛ք հարցի բարդությունը և աշակերտների կողմից պատասխաններ ստանալու հնարավորությունը:
- Մի՛ տվեք անորոշ հարցեր:
- Մի՛ պատասխանեք հարցերին ինքներդ:

[3] https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_98.html

Փորձարարական հետազոտություն

Հետազոտական աշխատանքս «Հարցադրումների մեթոդով սովորողների վերլուծական մտածողության զարգացումն» է, որը ենթադրում է աշխատանքներ կատարել դասարանում, տեսանելի դարձնել դրական կամ բացասական ազդեցությունը նոր նյութի յուրացման գործում և համեմատել մանկավարժական այլ մեթոդների, հատկապես ավանդական մեթոդների արդյունավետության հետ: Դասի արդյունավետության ապահովումը նշանակալի չափով պայմանավորված է հարցադրումներից, եթե դրանք ուղեկցվում են ողջ դասի ընթացքում, իսկ վերլուծական հմտությունների զարգացումը իրականանում է լավ մշակված բաց հարցերի շնորհիվ, որոնք համապատասխանում են Բլումի տաքսոնոմիայի աստիճանակարգին: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս սովորողին ինքնուրույն ձևակերպել տվյալ դասի նպատակներն ու վերջնարդյունքները, տիրապետել հարցադրումներ կազմելու մշակույթին, և, որ ամենակարևորն է՝ նրանք սովորում են սովորեցնել հարցադրումներով: Մեթոդի առավելությունը այն է, որ դասարանում ձևավորվում է մի միջավայր, որը բաց է քննարկումների, ուրիշի դատողություններին հետևելու, սեփականն ունենալու, զարգացնելու և հաստատելու համար: Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական , հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում և ձեռք բերած գիտելիքը համադրի իր նախնական գիտելիքների հետ և կարողանա կիրառել:

Փորձել եմ պարզել՝ ինչպիսին է հարցադրումների մեթոդի արդյունավետությունը նոր նյութի յուրացման գործընթացում և գրանցվեցին արդյոք հաջողություններ հետազոտական դասին: Պարզվեց, որ հետազոտության արդյունքում հարցադրումների մեթոդը խիստ արդյունավետ էր, որովհետև հետազոտվող դասաժամին բարձրացավ աշակերտների հետաքրքրությունը և առաջադիմությունը, ինքնուրույն աշխատելու հմտություններ ձեռք բերեցին, և նոր դասի յուրացման փուլում՝հենվելով սեփական գիտելիքների վրա, կարողացան ձեռք բերել նոր գիտելիքներ:

Խմբի նկարագիրը.

Հետազոտությունը կատարել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 3 հիմնական դպրոցի 2-րդ դասարանում՝ մայրենի առարկայից: Դասարանում սովորում են 18 աշակերտ (9 տղա, 9 աղջիկ): Գրանցվեցին բավականին մեծ հաջողություններ՝ ինչպես թիրախային խմբերում, այնպես էլ բարձր արդյունք ունեցող աշակերտների մոտ: Դասարանում սովորում են թե՛ թույլ, և թե՛ ուժեղ աշակերտներ, որոնց համար հարցադրումների մեթոդը դարձավ խթանիչ՝ սեփական գիտելիքների ձեռքբերման մեջ հաջողություններ գրանցելով: Ցանկությունս էր կիրառել տարբերակված հարցադրումներ, որոնք կարող էին նյութի յուրացումը դարձնել գիտելիք, հմտություն և կարողություն ուսումնառության մեջ: Նախատեսում եմ հետազոտվող դասից հետո շարունակական դարձնել այս մեթոդը՝ հատկապես նոր նյութի յուրացման գործում: Փորձել եմ ուշադրության կենտրոնում պահել բոլոր աշակերտներին, տարբերակված ուսուցմամբ ներգրավել նրանց դասի մեջ, նրանցից ակնկալել վերլուծություններ, մեկնաբանություններ, տրամաբանված եզրահանգումներ, սովորածը գործնականում կիրառելու հմտություններ:

Հետազոտական աշխատանքները սկսել եմ մարտ ամսին և իրականացրել եմ 1 դաս՝ մայրենիից, որը եղել է և՛ փորձարարական, և՛ ստուգող, որպեսզի համեմատելի և չափելի լինեն վերջնարդյունքները:

Փորձարարական դաս-1

Նոր նյութի հաղորդումը սկսում ենք վերհիշելով տարվա եղանակները՝ գուշակելով հանելուկները:

Ես հագնում եմ կանաչ շորեր,
Գլխիս դնում ծաղկեպսակ,
Ծաղկով զուգում դաշտ ու ձորեր,
Բերում հավքեր հազար տեսակ:
Բերում վարդեր, ծաղկունք պես-պես,
Դե ասացե՛ք, թե ով եմ ես:

Ես բերում եմ ձեզ շոգ օրեր,
Օրեր անամպ, արևավառ,
Հասկով լցնում դաշտ ու ձորեր
Եվ ուղարկում ձեզ ծով, ճամբար
Հասցնում համեղ մրգեր պես-պես,
Դե ասացե՛ք, թե ով եմ ես:

Բերում եմ ձեզ ամպոտ օրեր,
Առատ-առատ բերքով գալիս,
Ներկով լցնում դաշտ ու ձորեր
Եվ հավքերին չվել տալիս:
Տալիս եմ ձեզ մրգեր պես-պես,
Դե ասացե՛ք, թե ով եմ ես:

Բերում եմ ես ձեզ ցուրտ օրեր,
Գետը դարձնում արծաթ-սեղան,
Ճերմակ ներկում դաշտ ու ձորեր,
Բերում սահնակ, դահուկ սղղան
Բերում եմ ձեզ խաղեր պես-պես,
Դե ասացե՛ք, թե ով եմ ես:

Աշակերտները մեծ հետաքրքրությամբ լսեցին հանելուկները և կարողացան ճիշտ պատասխանել: Հանելուկների պատասխանները գրում են գրատախտակին: Կիրառելով հարցադրումների մեթոդը և մտագրոհը միասին, վերհանում ենք աշակերտների ունեցած գիտելիքները յուրաքանչյուր եղանակի մասին: Հարցերով պարզում՝ թե ինչ գիտեն եղանակների մասին, գրատախտակին գրված եղանակների տակ գրում են տրված եղանակին բնորոշ մի բառ: Քանի որ թեման ծանոթ է աշակերտներին, այդ իսկ պատճառով բոլոր աշակերտները՝ անկախ ընդունակությունների, կարողացան պատասխանել տրված հարցերին: Համեմատեցին տարվա եղանակները, վերլուծեցին տարբեր երևույթներ, որոնք տեղի են ունենում այս կամ այն եղանակին: Հարցադրումներով փորձում եմ տեքստի բովանդակության շուրջ կանխագուշակման կարողություններ զարգացնել՝

նկարագրման և հենակետային բառերի միջոցով: Նոր դասը սկսեցին կարդալ աշակերտները՝ սկզբից բարձր առաջադիմություն ունեցողները,հետո՝ միջին ու ցածր: Ընթերցվում է մեկնաբանություններով, իրականցվում է բառաբացատրական աշխատանք:

Դասարանում բոլորն ընթերցում են՝ իրար շարունակելով, այնուհետև հարցադրումներով վերլուծում և եզրահանգումներ ենք կատարում տեքստի բովանդակության վերաբերյալ.

Աշակերտները՝ պատասխանելով հարցադրումներին, պատկերացում են կազմել բովանդակության մասին, գիտեն ինչի մասին է, ինչ է նկարագրված և տանը սովորելուց ավելի հեշտ կլինի արդեն:

Անդրադարձ կատարեցինք նաև լեզվական աշխատանքին: Վերհիշում ենք պարզ, բարդ, ածանցավոր բառերի մասին ունեցած գիտելիքները. Դասագրքի առաջադրանք 4-ը կատարում ենք բանավոր:

Դասի ավարտին՝ որպես կշռադատում, կատարեցինք «Քառաբաժան» մեթոդը

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ հիշեցի	Ի՞նչ զգացի

Այս փորձարարական դասից հետո ես ևս մեկ անգամ համոզվեցի, որ հարցադրումները շատ կարևոր դեր ունեն դասի ցանկացած փուլում, այն ապահովում է աշակերտների ներգրավվածությունը դասին, կարողանում են ուշադրությունը կենտրոնացնել և ուշադիր լսել, անել որոշակի դատողություններ:

Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր «Ոզնին»: Թեման շատ մատչելի ու հետաքրքիր էր: Դասը սկսեցի տնայինի ստուգումից, հին դասի հարցումից: Հարցադրումներով ստուգեցի նախորդ դասից ձեռք բերած գիտելիքները, արտասանեցին հանձնարարված անգիրը: Աշակերտներն իրենք էլ էին կարողանում ձևակերպել հարցեր և միմյանց տալ:

Նոր նյութի հաղորդումը սկսեցի հանելուկի առաջադրմամբ.

Մի բարձի վրա՝
Շա՛տ-շատ ասեղներ,
Բայց ոչ մի ասեղ
Չես կարող թելել:

Աշակերտները ճիշտ գուշակեցին հանելուկը, կատարեցին եզրակացություն, որ ոզնու պաշտպանական միջոցը փշերն են:

Դասի հաջորդ փուլում կիրառել եմ «Բանալի բառեր» մեթոդը՝ տեքստի բովանդակության կանխագուշակման համար: Աշակերտներին տրվում է ժամանակ, որ նրանք կռահեն, թե տրված բառերի շրջանակներում ինչ բովանդակություն կարող է ունենալ բանաստեղծությունը, փորձում են գուշակել: Աշակերտներից ոմանք կարողացել են ճիշտ մեկնաբանել և կապել բառերն իրար հետ:Բարձրաձայն ընթերցելուց հետո ստուգում են՝ ճիշտ են կռահել, թե՞ ոչ: Ընթերցելիս իրականացվում է նաև բառաբացատրական աշխատանք (անծանոթ բառերի իմաստների ճշգրտում և բացատրություն): Կարդալուց հետո հարցադրումներով ամրապնդում ենք դասի բովանդակությունը, կատարում ընտրովի ընթերցանություն: Տարատեսակ հարցերով և ընթերցելով՝ լիովին ընկալեցին դասանյութի բովանդակությունը, կարողացան ճիշտ դատողություններ անել՝ ունեցածը գնահատել և արժևորել: Ինչպես նաև կարողացան ճիշտ գնահատական տալ ոզնու արարքին:

Լեզվական աշխատանքը վերաբերում էր նախադասություն թեմային, հարցերով վերհանեցի ունեցած գիտելիքները նախադասության մասին և՛ օրինակներով, և՛ դասագրքում զետեղված առաջադրանքներով կարողացա ամրապնդել գիտելիքները, կատարեցինք «Կազմենք նախադասություն» խաղ-վարժությունը:

Կշռադատում փուլում կիրառեցի Հնգյակ մեթոդական հնարը՝ «Ոզնու» վերաբերյալ: Դասի վերջում հանձնարարեցի տանը դասը անգիր սովորել և խորհուրդ-նամակ գրել ոզնուն:

Այս փորձարարական դասին էլ շատ կարևորեցի հարցադրումների մեթոդը, առանց որի դասի որևէ փուլում հաջողություն չենք կարող արձանագրել: Գոհ եմ դասից, քանի որ դասարանում աշակերտ չկար, որ դասի բովանդակության մասին հարց տայի ու չպատասխաներ;

Եզրակացություն

Հետազոտության ընթացքում հանգեցի հետևյալ շատ կարևոր եզրահանգումների.

1) հարցադրումները շատ արդյունավետ էին և մեծ հաջողություններ գրանցեցի դասավանդելիս

2) որպես ժամանակակից մեթոդ՝ այն մեծացնում է աշակերտի ինքնուսուցումը, ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ և ձևավորում է հմտություններ՝ խնդիրների լուծման ժամանակ

3) խթանում է նրանց ինքնազարգացումը, ինքնավերլուծությունը, ինքնաստուգումն ու ինքնագնահատումը:

4) ընդլայնում է սովորողների մտահորիզոնը

5) հարցադրումների գործընթացը ապահովում էր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին, աշխուժություն, ակտիվություն և ուշադրության կենտրոնացում

6) հարցադրումներն ունեն ուղղորդող բնույթ

Կարևորում եմ հարցադրման մեթոդը որպես սովորողների վերլուծական հմտությունները զարգացնելու, ինչպես նաև ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման միջոց և գտնում եմ, որ իմ մանկավարժական գործունեությունը այս վերապատրաստումից հետո առավել հաջող կընթանա, որովհետև սեփական հետազոտությունների ընթացքում մարտահրավերային հարցադրումները օգնեցին հասկանալ, որ հարցադրումների մեթոդը արդյունավետ է ուսումնառության ընթացքում: Ուսուցիչների համար այս մեթոդը աշխատատար է, պահանջում է մասնագիտական բարձր մակարդակ, որովհետև հարցերը պետք է ուղղորդող լինեն նպատակից դեպի վերջնարդյունք, ճշգրիտ ձևակերպվեն, ունենան բովանդակություն և տարբեր մակարդակներ և համապատասխանեն յուրացվող նյութի թեմային: Հարցադրումների գործընթացը շատ կարևոր է ուսումնառության մեջ, չէ որ գիտելիքների մակարդակի բարձրացումն անհնար է առանց աշակերտների հետաքրքրության ակտիվացման:

Իմ իրականացրած փորձարարական դասից ստացված բավական հիմնավոր փաստերը ցույց են տալիս, որ առավել արդյունավետ դասերը ստացվում են այն դեպքում, երբ հարցադրումը ուղեկցվում է ողջ դասի ընթացքում: Դասի սկզբից մինչև ավարտը ուսուցչի կողմից ուղղվում են հարցադրման տրամաբանությունից բխող հարցեր՝ ստեղծելով բաց միջավայր, որում աշակերտները անկաշկանդ են հարցեր հնչեցնելու, մեկնաբանություններ ու եզրահանգումներ տալու մեջ, իսկ աշակերտների կողմից առաջադրված հարցերը ապահովում են դասի տրամաբանված մոտիվացիա:

Ինձ դուր եկավ աշակերտների ոգևորությունը: Տրված հարցերը ուղղորդված էին նոր թեմայի բացահայտմանը:

Հետազոտությունս ուներ նպատակ, խնդիրներ, որոնք լուծվեցին հետազոտության ընթացքում և արդյունք, որը դարձավ իմ մանկավարժական ձեռքբերումը :

Գրականության ցանկ

1. Ուսուցման արդյունավետ հնարներ / Սերոբ Խաչատրյան,2020- 74 էջ:
2. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.
3. Анцибор М .М. Активные формы и методы обучения. Тула 2002
4. Մայրենի 2 դասագիրք
5. Ալեքսանյան Լ. Ուսուցման մեթոդներ. Դրանց կիրառությունը // «Նախաշավիղ», Երևան, 2013
6. Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», Երևան, 2005 թ
7. /Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր»
8. https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_98.html

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Արևիկ Ավանեսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	28.0.2023	Կիսամյակ	1-ին	Դասարան	2-րդ
Թեմա՝	«Գարուն է եկել» մուտքի զրույց: Գարուն է գալիս:						
Օգտագործվող նյութեր՝	2-րդ դասարանի մայրենիի դասագիրք, տարվա եղանակների նկարներ						
Դասի նպատակը՝	**Գիտելիք** ՝ ամրապնդել ածանցավոր բառերի մասին ունեցած գիտելիքները **Հմտություն**՝ սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել բանաստեղծությունը **Արժեք**՝ ձևավորել գեղեցիկը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն						

Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնաարդյունք-ները	Աշակերտը կկարողանա՝ ●տարբերակել տարվա եղանակներից գարունը,գարնան գույները ●սահուն կարդալ բանաստեղծությունը ● ամրապնդել ածանցավոր բառերի մասին ունեցած գիտելիքները			
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառ-վող մեթոդ-(ներ)
Մուտք,ներկա,բացակա/3ր/ Սկիզբ /5-7ր/	Աշակերտները լսում են,մտածում տրված հարցերի մասին, հիշում անցածը,պատասխանում հարցերին:	Մտագրոհ է անում գարնան վերաբերյալ,հարցերի միջոցով փորձում նրանց իմացածը տարվա	Քանի՞ եղանակ և ամիս ունի տարին: Յուրաքանչյուր եղանակ քանի՞ ամիս ունի, որո՞նք են: Ինչո՞վ են	Մտագրոհ, քառաբաժան

Ընթացք /25-30ր/ Ավարտ /5ր/	Կարդում են հանձնարարված նյութ,քննարկում են բանաստեղծության բովանդակությունը և պատասխանում են հարցերին՝ բերելով օրինակներ: Ասում են պարզ, բարդ, ածանցավոր բառերի կանոնները, բերում օրինակներ: Համեմատում են բանաստեղծության բովանդակությունն ու նկարազարդումը	եղանակների մասին, լսում է կարծիքները: Արտահայտիչ ընթերցում է բանաստեղծությունը: Բացատրում է դասանյութի անծանոթ բառերն ուղղագրական բառերը: Առաջադրում է քառաբաժան մեթոդը: Ձևավորում է գեղեցիկը գնահատելու կարողություն	տարվա եղանակները տարբերվում իրարից: Նկարազարդումը ո՞ր տարվա եղանակին է բնորոշ: Ի՞նչ երևույթներ ենք տեսնում նկարում: Ի՞նչ տեսակի ստեղծագործություն է: Ինչպե՞ս է վերնագրված բանաստեղծությունը: Ինչի՞ մասին կարող է լինել այն: Քանի՞ տուն կա բանաստեղծության մեջ: Ինչո՞ւ է հեղինակը ուզում դռները բացել: Ո՞մ է դիմում հեղինակը: Ինչպե՞ս է գալիս գարունը: Ինչո՞ւ է լալիս բնությունը: Ինչի՞ց եք իմանում, որ գարուն է եկել: Ո՞ր քառատողը ձեզ դուր եկավ: Ինչո՞ւ:	
Տնային աշխատանք	*Առ.3* *Անգիր սովորել բանաստեղծությունը:*			

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Արևիկ Ավանեսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	28.0.2023	Կիսամյակ	1-ին	Դասարան	2-րդ
Թեմա՝	Ոզնին						
Օգտագործվող նյութեր՝	2-րդ դասարանի մայրենիի դասագիրք, ոզնու նկար						
Դասի նպատակը՝	Կիմանան՝ որոշակի բառերի ուղղագրություն: Կկարողանան՝ սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը, կիրառել նախադասության մասին ունեցած գիտելիքները: Կարժևորի՝ ունեցածը գնահատել:						

Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնաարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ ●գնահատել հերոսի վարքագիծը,ճիշտ դատողություններ անել ●սահուն կարդալ բանաստեղծությունը ●կազմել նախադասություններ			
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)
Մուտք,ներկա,բացակա/3ր/ Սկիզբ /5-7ր/	Աշակերտները լսում են,մտածում տրված հարցերի մասին, հիշում անցածը,պատասխանում	Տնայինների ստուգում,հանելուկի առաջադրում,քննարկման կազմակերպում:	Ո՞րն է տրված հանելուկի պատասխանը: Ո՞վ է տեքստի հերոսը: Ինչպե՞ս է պաշտպանվ	Բանալի բառեր, հնգյակ, հարցադրումների մեթոդ

Ընթացք /25-30ր/ Ավարտ /5ր/	հարցերին: Կարդում են հանձնարարված նյութ,քննարկում են բանաստեղծության բովանդակությունը և պատասխանում են հարցերին՝ բերելով օրինակներ: Ոզնի բառով գրում են հնգյակ	Բացատրում է դասանյութի անծանոթ բառերն ուղղագրական բառերը: Ամրապնդում է դասանյութի բովանդակությունը: Բացատրում է դասի բարոյախրատական իմաստը: Կատարում է լեզվական աշխատանք «Նախադասություն» թեմայի շուրջ: «Հնգյակ» մեթոդի առաջադրում Տնայինի առաջադրում:	ում այդ կենդանին: Ի՞նչ կլինի, եթե ոզնին կորցնի փշերը: Ինչո՞ւ ոզնին որոշեց վաճառել փշերը: Ո՞ւմ մոտ գնաց և ինչո՞ւ: Գայլն ինչո՞ւ կարողացավ թաթը դնել ոզնու վրա: Ճի՞շտ է արել ոզնին, թե՞ ոչ: Եթե հանդիպեիք ոզնուն ի՞նչ խորհուրդ կտայիք:	
Տնային աշխատանք	*Գրել խորհուրդ-նամակ ոզնուն:* *Բանաստեղծությունը սովորել անգիր:*			